ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

«ՍՈՍՅԱՑ ԱՆՏԱՌ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

Քրիստոսից շատ ու շատ դարեր առաջ, երբ դեռ չկար աշխարհի յոթ հրաշալիքներից և ոչ մեկը, Արարատյան դաշտում տնկվել է Սոսյաց անտառը, որ աշխարհի ամենահին արհեստական պուրակներից մեկն է:

Մովսես Խորենացին գրել է, որ այդ անտառը տնկել է Հայկ Նահապետի որդի Արամանյակը: Այս Արամանյակի որդի Արամայիսն էլ Սոսյաց անտառի կողքին հիմնել է Արմավիր քաղաքը: Սոսյաց անտառը սրբազան վայր էր համարվում: Մովսես Խորենացին գրում է, որ այս անտառին է նվիրվել Արա Գեղեցիկի թոռ Անուշավանը, որի պատճառով էլ ստացել է Սոսանվեր մականունը:

Հնում յուրաքանչյուր երկիր ունեցել է իր սրբազան ծառը: Հունաստանում այդպիսի ծառ է համարվել կաղնին, Հայաստանում՝ սոսին:

Սոսին հեթանոսական Հայաստանի խորհրդանիշն էր՝ Մասիսին հավասարազոր: Հայերը ռազմի դաշտ էին իջնում Սոսյաց անտառը պատկերող դրոշներով:

Ամենքդ էլ գիտեք, որ բոլոր ծառերի տերևներն էլ ինչ-որ չափով կարող են խշխշալ, շնկշնկալ, սվսվալ, փսփսալ, բայց հայոց նախնիք մյուս ծառերի տերևների շարժումներն անիմաստ են համարել և սոսի բառից կազմել սոսափել բառը:

Սոսյաց անտառը գոյատևել է 2300 տարի, Ք.ա.՝ քսանհինգերորդ դարից մինչև երրորդ դարի վերջը: Պատմիչները չեն հաղորդում, թե ինչպես է կործանվել այդ անտառը, որից ոչ մի հետք չի մնացել: Բայց Հայաստանը չէր կարող մնալ առանց սրբազան անտառի: Եվ Արմավիրի Սոսյաց անտառին անմիջապես հաջորդել է Բագարանի «Ծննդոց անտառը»:

Ասում եմ նաև, որ սոսին հայոց ծառերի նահապետն է. ու կարդում եմ նույն գրքից մի այլ պատմվածք.

«Հայկ Նահապետի հոր անունը Թորգոմ էր, Թորգոմի հոր անունը՝ Թիրաս, Թիրասի հոր անունը՝ Գամեր, Գամերի հոր անունը՝ Հաբեթ: Հենց սա էլ հայոց առաջին ապուպապն է:

Մի անգամ Հաբեթը թավուտ անտառով անցնելիս սկսում է ինքն իրեն խոսել: Հետո զարմանում է, որ ծառերից ոչ մեկը չի պատասխանում իրեն:

Ապա ձայնը բարձրացնում է, բացականչում ամբողջ ուժով: Կանգ է առնում և ունկնդրում: Նրան թվում է, թե ծառերից մեկն արձագանքում է իրեն: Մոտենում է վիթխարահասակ մի ծառի, որն ուներ մուգ դարչնագույն, ճաքճքված կեղևով բուն: Ծառի թաթաձև տերևներն այնպես էին սվսվում՝ ասես զրուցում էին ցածրաձայն: Հենց այդ պահին էլ Հաբեթը ծառը կնքում է սոսի անունով, որ նշանակում է բարձրահասակ, պերճագեղ, սեգ, վեհ: Հետո իր տոհմանդամներին ասում է.

– Խոսել գիտե միայն սոսի ծառը, մնացածները կամ համր են, կամ հայերեն չգիտեն:

Այդ ժամանակվանից էլ սոսին դարձավ հայոց ծառերի նահապետը»: